«ՄԱՅՐ ԱԹՈՌԸ՝ ՀՈԳԵԿԱՆ ՋՐՏՈՒՔ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ»

«Եվ ում որ Աստված կարգեց եկեղեցու մեջ, սրանք են, նախ՝ առաքյալներ, երկրորդ՝ մարգարեներ, երրորդ՝ ուսուցանողներ...»:
/Ա ԿՈՐՆԹ. ԺԲ 28/

Երրորդ՝ ուսուցանողների շարքերը համալրելու պատասխանատու և ոչ դյուրին աշխատանքի իրագործմանն են կոչված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնի կազմակերպած կրոնի ուսուցիչների պատրաստման լսարանները, որոնք արդեն երրորդ տարին է, ինչ գործում են: Այդ դասընթացներից առաջինը կազմակերպվեց Երևանում, ապա այն իր ընծյուղներն արձակեց հանրապետության այլ վայրերում: Կամավոր սկզբունքով գործող այդ դասընթացների ունկնդիրներ դարձան միջին տարիքի տարբեր մասնագիտությունների տեր մարդիկ, որոնք ցանկացան ամբողջական դարձնել Քրիստոսի աստվածային սիրուն և խաղաղությանը վերաբերող գիտելիքը:

Նոր դասընթացներին Մայր Աթոռի հոգևոր հայրերը ուսուցանեցին քրիստոնեության ընդհանուր պատմություն, Հին և Նոր Կտակարանները, Հայ Եկեղեցու պատմություն, ինչպես նաև Հայ Եկեղեցու տոներին, ծիսակատարությանը վերաբերող առարկաներ:

Արդեն երրորդ տարին է, ինչ նոյեմբերի 29-ին, Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների հիշատակի օրը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին են այցելում կիրակնօրյա դպրոցների գործող և ապագա ուսուցիչներ՝ մասնակցելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ սահմանված քրիստոնեական դաստիարակության օրվան նվիրված սեմինարին:

Այս տարի այդ օրը նշանավորվեց ևս մեկ կարևոր իրադարձությամբ: Դասընթացի այն մասնակիցները, որոնք հաջողությամբ հաճախել էին քննությունները, ստացան ավարտական վկայականներ: Այդ հուզումնալից իրադարձությանը ներկա էին թեմական առաջնորդներ, հոգևոր այրեր, հյուրեր: Մայր Աթոռը առաջին անգամ կրոնի ուսուցչի վկայականներ էր տալիս, որով կատարում էր մեծագույն մի առաքելություն՝ համալրելով քրիստոնեական կրոն ուսուցանողների դասը, որ տարիներ շարունակ ամուլ էր՝ ոչ բարենպաստ ժամանակներով պարտադրված:

Հիշարժան այդ օրը սկսվեց Սուրբ Պատարագով՝ նվիրված Հիսուսի պատգամախոսներին, որոնք քրիստոնեական հավատքի անհառելի լույսը տարածեցին Հայաստանում: Երիտասարդ պատարագիչ, ՔԴՔԿ-ի փոխտնօրեն Զարեհ արեղա Կարաղյանը հոգևոր արարողության ավարտին հոգեհույզ խոսքով դիմեց ներկա հավատացյալներին, որում կարևորեց Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների աստվածապատգամ գործի խորհուրդը: Նա հետաքրքիր մի հայացքով ներկաներին վերհիշեցրեց պատմական այն ժամանակների մասին, որում գործեցին զոհաբերության ոգով ապրող և իրենց կոչման կարևորությանն գիտակցությամբ օժտված նվիրյալները: Նրանք եկան կռապաշտության խավարի մեջ խարխափող մթագնած Հայաստան՝ սփռելու Քրիստոսի հոգեփրկիչ լույսը: Այդ նվիրական լույսի հետ նրանք մեր հայրենիք բերեցին նաև մի քանի նվիրական սրբություններ՝ Հիսուսի պատկերով դաստառակը, Սուրբ Գեղարդը, Աստվածամոր պատկերը և Հիսուսի տված յուղը, որը, համաձայն մեր եկեղեցու ավանդության, խառնվել է Հայոց աշխարհում օրհնված առաջին Մյուռոնին: Թադեոս-Բարդուղիմեոսյան քարոզչության լույսից ծագեց մեսրոպյան

վարդապետությունը, դառնալով մեր իմաստության անձնագիրը, անխառն պահեց մեր ազգային նկարագիրը: Այդ սուրբ նահատակների արյան վրա վեր խոյացավ Հայաստանյայց Եկեղեցին, որն իբրև ոգեղեն անառիկ մի ամրոց՝ անհողդողդ ու անսասան պահեց մեզ: «Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին մեր ազգային միասնականության ջահակիրն է, եզոր կամուրջը Հայաստանի ու Սփյուռքի միջև»,- ընդգծեց հոգեշնորհ հայր սուրբը:

Այնուհետև Վեհարանում կայացավ սեմինար, ուր բացման խոսքով հանդես եկավ օրվա պատարագիչը: Նա իր ողջույնի խոսքը հղեց ներկաներին, մասնավորաբար կրոնի ուսուցիչներին, որոնք եկել էին Երևանից, Արմավիրից, Վանաձորից, Արտաշատից, Մասիսից, Ապարանից: Ապա կարևորեց այն մեծ գործը, որ գթասրտության ոգով ու սիրով պիտի կատարեն մեր ուսուցիչները, ինչպես ժամանակին արել են Սուրբ Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը, Ներսես Շնորհալին և այլք: Բանախոսը մասնավորաբար ասաց. «Պետք է կրթել ու դաստիարակել մեր նախահայրերի ավանդներին հավատարիմ սերունդ՝ աստվածավախ, հայրենասեր, եկեղեցասեր, քրիստոնեական առաքինություններով վերափոխված: Համայնավարական Հայաստանում խախտվել էր վաղեմի սրբազան ավանդույթը՝ Եկեղեցի-դպրոց կապը: Այսօր մենք վերագտնում ենք մեր պատմական անցյալի թանկագին կորուստները՝ դրանց թվում վերականգնելով այն աղերսները, որով եկեղեցին ու դպրոցը կապված են եղել դարերի ընթացքում: Այդ կապն է ոգեշնչել հայ ուսուցչին՝ կրթելու սերունդներին, և ազգային սրբազան գաղափարների ու հոգևոր նկարագրի ձևավորման առաջին օրրանը դպրոցն է, որը սովորեցնում է լինել բարի, ազնիվ, առաքինի և նշմարտախոս: Այդպիսի հատկանիշներով օժտված սերունդ դաստիարակելու համար պետք է նրանց լսելի դարձնել Աստծու խոսքը: Այդ խոսքը Աստծու նշմարիտ վարդապետության ուսուցումն է, որը պետք է կատարեն մեր ուսուցիչները: Կրոնի ուսուցիչը ոչ միայն այս նշմարտությունը պետք է ուսուցանի, այլև այն որպես ապրելակերպ գերագույն համոզում դարձնի: Որքան խոսքն ու գործը մեկտեղվեն, այնքան արդյունքը բարկրալի կլինի: Ինչպես Գարեգին Առաջինն է ասում, երբ խոսքը հետևի գործին, կլինի խինդը հոգու: Ազգային դպրոցը պետք է կրթի այնպիսի սաներ, որոնք կդառնան ազգի և եկեղեցու նվիրյալներ»: Վեհափառ Հայրապետը քաջալերում է այս գործի նախանձախնդիրներին, միջոցներ տրամադրում մասնագետների պատրաստման, անհրաժեշտ գրականության տպագրման համար:

«Հոգևոր կյանքը Հայաստանում» դասախոսությամբ հանդես եկավ հոգեշնորհ Տեր Վազգեն վարդապետ Միրզախանյանը: Նա ցավով նշեց, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին հետխորհրդային տարիներին նախորդ տարիներից ժառանգեց եկեղեցական կառույցների ոչնչացում, հոգևորականության ախտորում, եկեղեցիների պայթեցում: Հոգևոր կյանքի պակասը ամենուրեք զգացել էր տալիս իրեն: Մայր եկեղեցին արցախյան շարժման առաջին իսկ օրերից փորձ կատարեց պատասխան տալու մեր ժողովրդի հոգևոր լիցքին, որ ձգվում էր դեպի իր արմատները: Նախ ստեղծվեցին կիրակնօրյա դպրոցներ, քարոզչական կենտրոն, ապա ձևավորվեցին նոր թեմեր, կրկնապատկվեց հոգևոր ճեմարանի սաների թիվը, հոկտեմբեր ամսից հայոց բանակում նշանակվեց հոգևոր խորհրդատու: Այս ընթացքում Երևանի պետական համալսարանում բացվեց Աստվածաբանական ֆակուլտետ: Նշանակալից էր քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնի ստեղծումը: Այսօր քարոզչական կենտրոնը բաղկացած է քրիստոնեական կրոն դասավանդող ուսուցիչների վերապատրաստման հանձնախմբից, հրատարակչական մարմնից, մշակույթի բաժնից, «Քրիստոնեայ Հայաստան» թերթի խմբագրակազմից և քարոզչական բաժնից:

Ի նպաստ քրիստոնեական դաստիարակության գործի՝ կենտրոնը բավականին ծավալուն աշխատանքներ է կատարում. կրոնի ուսուցիչների վերապատրաստումից բացի հրատարակում է դասագրքեր և ծրագրեր, կազմակերպում քրիստոնեական հանդիսություններ, ուխտագնացություններ և այլն: Մայր Աթոռի և ԳԴԳԿ-ի արդյունավետ գործունեության պտուղն են նաև այսօրվա հանդիսությունը և Հայաստանի տարբեր շրջաններում առկա հոգևոր աշխուժությունը:

Հաջորդ բանախոսը Երևանի պետական համալսարանի աստվածաբանական ֆակուլտետի դեկան գերաշնորհ Տեր Շահե արքեպիսկոպոս Անեմյանն էր, որը «Առաքելական հաջորդականության վարդապետությունը» դասախոսությամբ ներկայացրեց պատմական մի ակնարկ Քրիստոսի աշակերտների քարոզչական գործունեության մասին՝ կատարելով կարևոր եզրակացություններ:

Ուսուցիչներին ողջունելու էր եկել նաև ՀՀ գիտության և կրթության նախարար Արտաշես Գետրոսյանը: Նա իր անկեղծ զգացումն արտահայտեց հանդիսության վերաբերյալ՝ համարելով այն անսպասելի և հուզիչ: «Մենք երիտասարդ, անկախ պետություն ենք, և քրիստոնեական ճշմարիտ հավատքը կզորեղացնի մեր պետությունը: Ուրախ եմ, որ մեր դպրոցներում կունենանք հիանալի ուսուցիչներ, որոնք մեր ապագա սերունդին կդաստիարակեն այդ հավատքի մասին»,- ասաց նա: Ապա խիստ կարևորեց Մայր Աթոռի, մասնավորապես Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնի կատարած աշխատանքը , ինչպես նաև խոստացավ հնարավորության սահմաններում նպաստել, որպեսզի Հայ Առաքելական եկեղեցու հավատքը տեղ գտնի մեր դպրոցներում, հայ մանուկների սրտերում:

Հանդիսության ընթացքում հնչեցին «Ուրախ լեր Սուրբ եկեղեցի», «Էջմիածինն ի Հօրէ», «Երանելի սուրբ առաքեալք» շարականները: Ելույթ ունեցան նաև ԳԴԳԿ-ի մշակույթի բաժնի ջութակահարների խումբը, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ կիրակնօրյա դպրոցի երգչախումբը: Կրոնի դասընթացների ավարտական վկայականներ հանձնվեցին գործող հինգ լսարանների 278 անդամի և Երևանի ու Էջմիածնի կիրակնօրյա վարժարանների 88 ուսուցչի:

Սեմինար-հանդիսությունը եզրափակվեց Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջինի օրհնության խոսքով: Ողջունելով հանդիսության մասնակիցներին և շնորհակալության ու գնահատանքի խոսք ուղղելով կրթական գործին սատար կանգնողներին, հատկապես այդ գործի կազմակերպիչներ Վազգեն վարդապետ Միրզախանյանին և նրա օգնական Զարեհ աբեղա Կարադյանին՝ Նորին Սրբությունը նոյեմբերի 29-ը իմաստավորեց որպես հոգեփոխության մի պահ:

Լինելով աշխարհում քրիստոնեություն ընդունած առաջին ազգը՝ պետք է մեզ պարտավորված զգանք և խոսենք ոչ թե պատմության անունից, այլ մեր ներկա գործունեությամբ պանծացնենք մեր եկեղեցին:

Քրիստոնեությունը սոսկ նորկտակարանյան պատմություն չէ, գրաբաշտությունը դեռևս աստվածապաշտություն չէ: Եկեղեցին միայն ծես չէ, այն Քրիստոս Աստծու և մարդու հանդիպումն է, իսկ աղոթքը՝ նրանց միացնող ուժը: Երեխաներին պետք է աղոթել ուսուցանել, բացատրել, որ կյանքի ուժը Հիսուսի մեջ է: Կարևոր ու պատասխանատու է ուսուցչի առաքելությունը, և նա է, որ վերստին պիտի ստեղծի քրիստոնեությունը սնող հողը: Վեհափառ հայրապետը նշեց, որ Հայաստանում սկսված քրիստոնեական վերազարթոնքը հոգևոր սնունդի կարիք ունի, և Մայր Աթոռը պատրաստ է շարունակելու հոգևոր ջրաշխի իր առաքելությունը:

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ